

չը ձևանար, Լատինը շատոնց մեր վանքը՝ յափշտակած էին. գիտեմ՝ գէշ դադարաբար ունիք Կոչկարեմք, ինչ վրայ, բայց համազունցէք թէ՛ դանակն ալ սիրելի գործիք մը չէ, այսու ամենայնիւ ունի իւր օգտակար ծառայութիւններն. Յունաց Պատրիարքն Պաւլարաց խնդրոյն մէջ իրաւունք չունեցած ըլլալը չը գիտնալու չափ աղայ չէ. բայց տես ինչպէս իր բոլոր ուժովը ոչ կարեմքին և տիւեղիական ժողովոյ պլլուելի է. Լատիւ ըսել չեմք ուզեր թէ՛ Տէրութեան դէմ՝ դժուարութիւններ յարուցէք. ըսաւ. տէրութիւնը մեր իրաւանց մասին բան մը անգամ ըսած չէ, որ դուք ալ անոր դէմ՝ դժուարութիւններ հանելու ստիպուիք, այլ մեզնէ անոնք, որք մեր հնուութեանցը կը դաշին և քաղաքագէտ կը ձևանան, անոնց նկատմամբ է խօսքս:

Էֆէսոսիւնիւ մէջ ազգասէրներ ալ կան, բայց կարող չեն շեղ իրենց զգացումն յայտնել, վասն զի իրարմէ կը վախնան. ասոնց մէջ անանկներ կան, որ նոյն իսկ Ձեր իրենց հետ մտերիմ բարեկամ ըլլալն չեն ուզեր. բայց չեն կրնար ալ քաղաքաւարութեան դէմ մեղանշել. Դուք կը հասկնաք մեր զորոնք ակնարկել ուզելիւ Լնուն տալ չենք ուզեր:

Ե՛հա մեր վերջին խօսքը այս է. Դուք ժողովրդեան մարդ էիք, Պատրիարք ընտրուելնէդ ի վեր մեծատանց մարդ եղաք. դարձէք դարձեալ ձեր առջի վիճակը և ժողովրդեան մարդ եղիք. մեծատունները Ձեզ՝ կրը պատրիարքութենէ իյնաք՝ կը թողուն, ինչպէս թողուցած են շատերը. իսկ ժողովուրդը միշտ Ձերն է և Դուք ժողովրդեան, ժողովուրդով Պատրիարք եղաք, ժողովրդեան Պատրիարքը եղիք. Ձեզ ընտրողները՝ կը կրկնեմք հոս, մեծատունները չէին, ժողովուրդն էր. Սիւր բարձրացուցիք, Էջմիածինը նուազագոյնցած եղաք. պատմութեան առջև, ժողովրդեան առջև պատասխանատու էք. Էջմիածնայ . . . ծաղրողներուն դէմ լուռ կեցաք. դարձեալ պատասխանատու էք. Էջմիածնայ կաթողիկոսին կոնդակները երևան չը հանեցիք ու պահեցիք. դարձեալ պատասխանատու էք. գիտցիք որ՝ Էջմիածինը նուազացնել որչափ ազգին ձեռքն է՝ զայն բարձրացնելը ազգին ձեռքը չէ այնչափ. Դուք մենէ

աղէք գիտէք թէ՛ անոր անունը մեր Ս. պատարագին մէջ ասկից 30 տարի առաջ ինչ ազդեցութեամբ և որչափ դժուարութեամբ կրցաւ յիշուիլ. վերք մ'է այս յաղթանակը ունեց սրտին վրայ, այս վերքը Ձեր ձեռքովը բուժելու ձեռնարկած են. Ձեզ բոլորովն փոխած են. կրնաք դարձեալ դադրեցնել տալ այդ յիշատակութիւնը, բայց չէք կրնար դադրեցնելէդ վերջը դիւրութեամբ նորէն շարունակել տալ:

Աւտի Հայրիկ. Ձեզ Պատրիարքութենէ ձրգելու մարմինը Ձեր շուրջը և Ձեր գործոցը մէջ փնտոնեցէք. վասն զի եթէ ընդհանուր քուէարկութեամբ Եզգին դիմէք թէ՛ Հայրիկը կուղէք՝ թէ՛ Էջմիածինը. — Եզգը՝ Հայրիկն ալ կուզենք, Էջմիածինն ալ կուէ իսկ եթէ Դուք Էջմիածինն բաժնուիք ու առէք զայն՝ այն ատեն վստահ եղիք թէ՛ Հայրիկին վրայ կը ցաւիք. իսկ Էջմիածինն չենք բաժնուիք կրտսն և վերջապէս Էջմիածնայ համար կրնաք զոհ երթալ. հետեւարար զորոշ կեցիք այն Աթոռին դաշնէ. միշտ երբ Սիս և Էջմիածին բառերն լսէք՝ մի բանաստեղծաբար խորհիք, այլ խնդրոյն գէշ և քաղաքագիտական կողմերն աչքի առջև ունեցէք. զի ասոնք Ձեր ձեռքով բաժանման հիմը կը ձգեն, ազգատեաց մէկ յաջորդնուդ ձեռքով չէնք կը շինեն. մի վերջապէս անձերնուդ վստահէք. այլ վստահեցէք՝ հնութեանց ձեռք չը գաշելու դրութեան. զի հոն է ազգին և Ձեր աթոռոյն շահը. Երազիկ:

ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Յառաջակայ Յունիս ամսոյ սկիզբները Վ. Ե. Հափառ և Սրբազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց պէտք է երթայ ի վանան Հառիճոյ՝ որ ի Խիչաղ՝ օգափոխութեան համար: